

24973

Центральный Комитет Профсоюза  
Сельхозлесрабочих С С С Р

ԲՈՅԼԵՎԻԿԻՆԵՐԻ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԽՄԴԵՍ Ե ՊԱՇՊԱՆՈՒՄ  
ԲԱՏՐԱԿԻ ՃԱՅԵՐԸ

331.88  
4-13

ԽԱՀՄ Գյուղ. և Անտառ. Բանվորների  
Պոլիմերյան Կենտրոնական Կոմիտե

16 MAY 2013

331-88

Ա. ԿԱԶԱԿՈՎ,

15 JAN 2010

4-13

մար

ԲՈՅԼԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԻՆՉՊԵՍ Ե ՊԱՇՏԱՆՈՒՄ ԲԱՏՐԱԿԻ ԾԱՀԵՐԸ

236



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՌԱՋՏԱՐԱԿԱՆ ԽՈՍԿՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ 1929

24475

Տ պագրվում է Խ 12 թ Գյուղատնտեսական յեկ անտառագործական  
բանվորների պրաֆեսիոնալ միուրյան («Հողանտառմիուրյան»)  
Կոմիտեի պատվերով:

---

Ուսուելենից քարգմանեց Թ. Զ.

---

## ԱՌԱՋԱԲԱՆ

ԲԱՏՐԱԿՆԵՐԸ ՇԱՀԱԳՐԳՈՎԱՆ ԵՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՀԱՅՈՂ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Յամամիութենական կոմունիստական կուսակցության XV համագումարը, վոր կայացավ 1927 թ.  
դեկտեմբերին, քննեց կուսակցության և խորհրդային  
իշխանության վերջին տարիների գործնեյությունը:  
Անվիճելիորեն պարզվեց, վոր մեր յերկիրը մեծ քայլ  
ե արել դեպի սոցիալիզմ: Այդ ժամանակամիջոցում  
պետական արդյունաբերության զարգացման գործում  
մեծ նվաճումներ ե արված: Աճել ե բանվորների  
թիվը, բարձրացել ե նրանց աշխատանքի արտադրու-  
ղականությունը, ավելացել ե նաև աշխատավարձը:  
Արդյունաբերությունը հիմա արգեն շատ ավելի աս-  
րանք ե արտադրում, քան պատերազմից առաջ: Հին,  
մաշված մեքենաները գործարաններում և ֆաբրիկա-  
ներում փոխարինվում են նոր մեքենաներով և դագ-  
դահներով: Կառուցվում են նաև նոր գործարաններ:  
Կառուցվում են մեծ նոր եկեղեցրոկայաններ: Առաջ  
են յեկել արդյունաբերության նոր ճյուղեր, վորոնք  
ցարական մուսաստանում գոյություն չունեյին, բարդ

զյուղատնտեսական և ուրիշ առեսակի մեքենաներ,  
այերդպահներ, եկեկտրոկայանների շարժիչ մեքե-  
նաներ և այլն արտադրող գործարաններ: Բավական  
բարելավվել են փոխադրության միջոցները՝ յեր-  
կաթուղիները, ծովային և գետային նավատորմիզը:  
Ամրացել ե պետական գանձարանը: Մեծ չափով ամ-  
րացել և զարգացել ե պետական և կոռպերատիվ առ-  
ևտուրը: Վերջինս քայլ առ քայլ հետապնդում ե մաս-  
նավոր առևտրականին: Աճել և ամրացել ե նաև զյու-  
ղատնտեսական կոռպերացիան:

Պետական արդյունաբերության, փոխադրական մի-  
ջոցների ամրապնդումը ոժանդակել ե զյուղատնտե-  
սության վերելքին: Շատացել են ցանքսերը և անա-  
սունների թիվը: Նկատվել ե, վոր գյուղացիական  
տնտեսությունները ձգտում են տնտեսավարության  
կուլտուրական ձևերին (բազմադաշտի, խոտաբուծու-  
թյան, դաշտերի ավելի լավ պարարտացման և այլն):  
Գյուղին արվող մեքենաների, արակտորների և ար-  
դյունաբերական ապրանքների մատակարարման գործը  
զգալի չափով աճել, զորացել ե: Ուժեղացել ե կոռպե-  
րացիայի գործներությունը գյուղում:

Ժողովրդական տնտեսության ամրացումը բարե-  
լավել ե մեր յերկրի աշխատավորների — բանվորների և  
զյուղացիների դրությունը: Գյուղատնտեսության ամ-  
րացման հետ միաժամանակ գյուղում սերտորեն իրար  
հետ կապվել են չուներները և բարակները, ամ-  
րացել են խորհուրդները, աճել ե գյուղի հիմնական

խավերի — միջակների, չունեսորների և բատրակների  
ինքնագործներությունը:

Մեր անտեպության աճումն ավելի ևս ամրացրեց  
գյուղացիական լայն զանգվածների և բատրակների  
վստահությունը դեպի կոմունիստական կուսակցու-  
թյունը և խորհրդացին իշխանությունը:

Բայց չնայած մեր հաջողություններին՝ մեզանում  
քիչ չեն նաև պակասությունները — մեր աշխատանքի  
մեջ դեռևս բացեր շատ կան: Արդյունաբերությունը  
առ այժմ չի արտադրում բավարար չափով ապրանք-  
ներ: Այդ ապրանքների գները դեռ բարձր են: Մեր  
արդյունաբերության համար հում նյութը (բամբակ,  
բուրդ, կաշի) չի բավարարում: Քաղաքում գոյություն  
ունի գործարկություն: Թեև գյուղատնտեսությունը  
ավելի յե արտադրում քան ցարի ժամանակ, բայց  
դա դեռ քիչ է: Առաջիկ նման յերաշտը մեր գյու-  
ղացու չարիքն է: Յերեքդաշտյան սիստեմը դեռևս  
նվազեցնում ե գյուղի ույժը: Գյուղական տնտեսու-  
թյան թույլ լինելու պատճառով, տնտեսությունից  
ստացված մթերքների մեծագույն մասը սպառվում է  
միենույն տնտեսության կարիքների համար: Չունե-  
վոր, նույն իսկ միջակ գյուղացու մոտ քիչ ավելցուկ  
է մնում՝ շուկայում ծախելու համար: Իսկ զա ինարկե  
գանգաղեցնում ե մեր արդյունաբերության աճումը,  
թուլացնում ե մեր առևտուրը արտասահմանի հետ,  
խանգարում մեր ամբողջ ժողովրդական տնտեսու-  
թյան զարգացմանը:

Մեր գյուղի ամենացավոտ կողմը — դա մեծ թվով  
ավելորդ աշխատավոր ձեռքերն են, վորոնց չի կարելի  
ոպտագործել գյուղում և վորոնց համար քաղաքում  
աշխատանք գտնելը դժվար է։ Ավելորդ աշխատավոր  
ձեռքերը նեղ տեղն են գցում բատրակին և չունե-  
վորին, դժվարացնելով նրանց համար աշխատանք  
ճարելը։

Այդ բոլոր հարցերը կապված են մեր Խորհրդա-  
յին Միության ամենալայն աշխատավորական զան-  
գվածների շահերի հետ և այս բոլոր հարցերի վերա-  
բերյալ XV համագումարը արակ իր ցուցմունքները։  
Յամագումարը տվեց իր ցուցմունքները և այն մա-  
սին, թե ի՞նչ պետք է անել՝ բատրակների դրությունը  
բարելավելու և նրանց աշխատանքը պաշտպանելու  
համար։ Ինարկե, բատրակը շահագրգոված ե մեր  
ամբողջ շինարարության գործում։ Բայց նա ունի նաև  
իր առանձին շահերը։ Յեկ հենց դրա մասին — թե  
կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը ի՞նչ-  
պես են ողնում բատրակին — մենք կպատմենք այս  
գրքույկի մեջ։

Ի՞նչ ՊԵՏՔ Ե ԱՆԵԼ՝ ԳՅՈՒՂՈՒՄ ԲԱՏՐԱԿԻ  
ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՎԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԼԱՎ ՀԻՄՔԵՐԻ ՎՐԱ ԴՆԵԼ ԲԱՏՐՈՎԿՆԵՐԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԳՈՐԾԸ

Հիմնական կազմակերպությունը, վորը միացնում  
է գյուղատնտեսական և անտառային բանվորներին —  
դա գյուղատնտեսական և անտառային բանվորների  
արհեստակցական միությունն է։ Այս միության մեջ  
ներկայումս կան 1,200,000-ից ավելի գյուղատնտե-  
սական և անտառային բանվորներ, վորոնց թվում —  
մոտ 500,000 բատրակներ։ Վերջին տարիները միու-  
թյունը ահազին աշխատանք է կատարել այդ բան-  
վորներին կազմակերպելու գործում։ Դրանում կարելի  
յե համոզվել հետեւյալ տվյալներից։ — 1922 թ. միու-  
թյան մեջ կազմակերպված եյին 240 հազար մարդ,  
1923 թ. — 275 հազար մարդ, 1924 թ. — 329 հազար,  
1925 թ. — 595 հազար, 1926 թ. — 1 միլիոն 109 հա-  
զար, և 1927 թ. — 1 միլիոն 200 հազար մարդ։

Բատրակներից արհեստակցական միություն կազ-  
մակերպելու համար պետք յեղակ շատ աշխատանք  
թափել։ 1923 թ. ամեն մեկ հարյուր բատրակից մի-  
այն մեկն եր միության անդամ, 1924թ. — հարյուրից  
մոտավորապես 4 մարդ, 1925 թ. — 25 մարդ,  
1926 թ. — 23 մարդ և 1927 թ. — 15 մարդ։

1927 թ. միության մեջ ընդրկված ե բոլոր բատ-  
րակների մեկ քառորդ մասը միայն: Իսկ հովիժների  
(վորոնց թիվը Սոցիալիստական Խորհրդային Հանրապե-  
տաւթյունների Միության մեջ համում ե 600—700  
հազարի) առայժմ միայն մոտավորապես տասներորդ  
մասն ե մտնում միության մեջ:

Այս բոլորից յերեսում ե թե ինչ խոշոր ինդիրներ  
են կանգնած միության առաջ՝ բատրակներին և հո-  
վիժներին միության մեջ առնելու համար: Բատրակ-  
ները արդեն հասկանում են, վոր միայն կաղմակեր-  
պության միջոցով կարելի յե բարելավել իրանց դրու-  
թյունը: Առանձին-առանձին, անջատված, անկաղմա-  
կերպ բատրակին ոգնելը և նրա շահերը պաշտպանելը  
դժվար ե: Վարձողը կիսաթի այդպիսի անկաղմակերպ  
բատրակին: Անտես անելով խորհրդային որենքները,  
կոգումի բատրակի աշխատանքից: Այդ բանի դեմ հա-  
ջող կովել կարելի յե միայն կաղմակերպված բատ-  
րակների միացյալ ուժերով:

Ահա թե ինչու կոմունիստական կուսակցությունը  
անհրաժեշտ ե գտնում, վոր միության մեջ դեռևս  
չընդունված բատրակներին պետք ե առնել միու-  
թյան մեջ:

XV համագումարը այդ մասին իր բանաձեռնում  
ասում ե, վոր գյուղատնտեսական և ան-  
տառային բանվորների միության աշխա-  
տանքը՝ դեռևս անկազմակերպ բատրակ-  
ների կազմակերպման գործում՝ հար-

փոր ե ուժեղացնել, և միաժամանակ հա-  
վասար չափով հարկավոր է գյուղացնել  
գյուղատնտեսական և անտառային միու-  
թյան մեջ ներս քաշելը՝ դեռևս միության  
մեջ չնդգրկված գյուղական այն կիսապրո-  
լետար տարրերին, վորոնց համար վարձու-  
աշխատանքը կազմում ե գոյության մի-  
ջոցի հիմական աղբյուրը:

Բատրակների կազմակերպման աշխատանքի գըլ-  
խավոր գժվարությունը կայանում ե նրանց ցրվա-  
ծության և կուլտուրական յետամացության մեջ:  
Շատ բատրակներ իրենց տգիտության շնորհիվ չեն  
գիտակցում միության մեջ մանելու կարևորությունը:  
Բայց սեփական կաշվի վրա փորձելով, թե վորչափ  
գժվար ե մենակ կովելը, կամ թե այդ բանը ավելի  
փորձված ընկերների կամ միության մեջ աշխատող-  
ների բացարություններից հասկանալով, բատրակ-  
ները ըմբոնում են միության մեջ կազմակերպվելու  
անհրաժեշտությունը:

Միությունը բատրակ տղամարդուն և բատրակ կը-  
նոջը բացարում ե նրանց շահերը պաշտպանող որենք-  
ները, ոգնում ե նրանց պայմանագիր կնքելու, պաշտ-  
պանում ե նրանց շահերը հանդեպ վարձողների:

Բայց մինչև այժմ քիչ չեն թերությունները բատ-  
րակների և հովիժների կազմակերպման գործում: Վեր-  
ցնենք հենց միության անդամ ընդունվելու հարցը:  
Պատահում ե, վոր, չնայած բատրակի ծայր աստի-

Ճանի ցանկությանը, նրան չի հաջողվում մտնել միության մեջ: Կանոնագրության համաձայն, միության անդամի ընդունելությունը պետք է հաստատվի ընդհանուր ժողովի կողմից: Յերբեմն ընդհանուր ժողովը յերկար ժամանակ տեղի չի ունենում: Իսկ յերբ ժողովը բարբակին անդամ ե ընդունում, առաջ ե գալիս նոր արգելք — բարբակի ընդունումը պետք ե հաստատի միության ույոնական կոմիտեն: Իսկ այդ կոմիտեն յերբեմն գտնվում է 40-50 կիլոմետր հեռու: Մինչև վոր ույոնական կոմիտեն կհաստատի, մինչև վոր անդամատոմսը կպարաստեն և մինչև վոր այդ անդամատոմսը կուղարկեն նոր անդամին — մեկ ել տեսնես բարբակը արգեն չկա՝ նա ուրիշ աշխատանքի յե անցել, ուրիշ ույոնումն ե գտնվում: Պատահում են դեպքեր վոր ուրիշ գավառից և կամ նահանգից յեկած բարբակը, սեղոնը վերջանալուց հետո, ել իդուր չի սպասում անդամատոմսին և մեկնում ե. և այդպես նա չի կարողանում ստանալ: Պետք ե այնպես անել վոր ընդհանուր ժողովից հետո անդամատոմսը բարբակին հանձնվի գյուղական բանվորական կոմիտեյի միջոցով:

Առանձնապես մեծ դժվարությունների են հանդիպում միության մեջ մտնող կիսապրոլետար բարբակները (կիսապրոլետարներ կոչում են այն բարբակներին, վորոնք ունեն սեփական գյուղացիական փոքր տնտեսություն): Միությունը ստիպված է լինում ամեն մի անդամի ընդունելության դեպքում

պարզել՝ արդյոք տվյալ կիսապրոլետարի համար վարձով աշխատանքը ապրուստի հիմնական միջոցն ե թե վոչ: Այդ բանը հարկավոր է պարզել, վորովհետեւ միությունը չի կարող ամեն մի վարձով աշխատողին անդամ ընդունել: Վարձով աշխատում են և չունեվորներն և նույն իսկ միջակները: Յեթե ամեն մի վարձով աշխատողին միության մեջ ընդունելին, այդ դեպքում միությունը կդառնար չունեոր գյուղացիական և մասամբ միջակների կազմակերպություն: Իսկ այդ դեպքում միությունը կկորցներ բանվորական կազմակեպության իր դեմքը:

Միությունը ընդգրկում է այն պլրոլետարներին (բարբակներին և ուրիշ գյուղատնտեսական և անտառային բանվորներին), վորոնք չունեն սեփական տընտեսություն և կամ վորոնց տնտեսությունը այնպիսի դրության մեջ ե, վոր ապրուստի միջոցներ չի տալիս: Միությունը ընդգրկում է բարբակների նաև այն մասը, վորոնք իրենց ունեցած գյուղացիական տնտեսությունից վորեև բան ստանում են: Բայց այդ տնտեսությունը այնքան թույլ է, վոր ապրուստի գլխավոր միջոցները հարկավոր ե լինում ձեռք բերել վարձու աշխատանքով:

Այդպիսի կիսաբանվորները, կիսագյուղացիները (կամ ինչպես նրանց անվանում են՝ կիսապրոլետարները) իրավունք ունեն միության մեջ մտնելու: Բայց մինչև հիմա վեչ բոլորն են այս բանը հասկանում:

Կուսակցությունը մատնանշել եւ դյուրացնել  
այդ բատրակներին միության մեջ ներս  
քաշելու գործը: Մանավանդ հարկավոր եւ ուշա-  
դրություն դարձնել այն բատրակների կազ-  
մակերպման վրա, վորոնք աշխատում են  
կուլակների տնտեսություններում: Կու-  
լակը գիտե ե հուզ տալ բատրակին, վորպեսզի  
նա ավելի աշխատի: Բայց յերբ համում ե աշխա-  
տավարձը վճարելու ժամանակը, կուլակը աշխատում  
ե քիչ վճարել, բատրակին խաբել:

Կուլակին ընդդիմադրության կարելի յե ցույց  
տալ միություն կազմակերպելով:

Մեծ թվով գյուղատնտեսական և անտառային բան-  
վորներ և բանվորուհիներ, վորոնք ժամանակավոր աշ-  
խատում են խորհրդային տնտեսություններում, նույն-  
պես չեն ընդդրկված միության մեջ: Մանավանդ թույլ  
ե բանվորուհիների և բատրակ կանանց կազմակերպումը:  
Դա շատ ծանր կերպով անդրադառնում ե նրանց գոյու-  
թյան վրա: Առանց կազմակերպության, առանց միու-  
թյան — բատրակ կինը՝ ինչպես և բատրակ տղամարդը՝  
անկարող են բարելավել իրենց դրությունը:

ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՊԻՏԻ ԿԱՌՈՒՑՎԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԵԵՎ. ԱՆՏՍՐԱՑԻՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԶԵՌՔԵՐՈՎ.

Կուսակցության ԽIV համագումարը պրոֆմիու-  
թյունների աշխատանքներին վերաբերող իր բանաձևում  
մատնանշել եր վոր, միության (գյուղատնտեսա-

կան և անտառային բանվորների) հաջողությունը  
ապահովված կլինի միայն այն չափով վոր-  
չափ նա կալարողանա մոտ ժամանակում  
ստեղծել միութենական ակտիվ՝ իսկապես  
գյուղատնտեսական բանվորներից, և կան-  
ցնի իր բոլոր մարմինների կառուցմանը  
նոր մալ (կանոնավոր) ընտրողականության  
ոկրքունքով:

Այս յերկու տարվա ընթացքում միությունը մեծ  
աշխատանք ե թափել բատրակների ակտիվը առաջ  
քաշելու և կրթելու գործում: Միության մեջ արդեն  
կան գործունյա աշխատողներ (ակտիվիստներ), վորոնք  
առաջ են քաշվել հենց բատրակների, հովիվների, խոր-  
հրդային անտեսությունների բանվորների և փայտա-  
հատների շարքերից: Այժմ արգեն շատ գյուղական  
բանվորական կոմիտեների գլուխ են կանգնած բատ-  
րակ տղամարդիկ և բատրակ կանայք: Այս տեսակ  
աշխատողները առաջ են քաշվում միութենական ղե-  
կավար հիմնարկություններում, մինչև իսկ ընտրվում  
են միության կենտրոնական կոմիտեյի մեջ:

Հասկանալի յե, վոր բատրակների կազմակերպման  
գործում խորհրդային անտեսությունների բանվորների  
վրա մեծ աշխատանք ե ընկնում: Խորհրդային անտե-  
սությունների բանվորները ավելի լավ են կազմա-  
կերպված: Նրանք աշխատում են խոշոր պետական  
անտեսություններում: Նրանք ավելի մոտիկից են  
մասնակցում գյուղի սոցիալիստական շինարարու-

թյանը: Խորհրդային տնտեսությունների բանվորները  
ավելի լավ են կազմակերպվել: Նրանք ավելի փոր-  
ձառություն ունեն, նրանց վրա լուրջ խնդիր եղան-  
րանում առանձնապես ակտիվ կերպով մասնակցել  
միության շինարարությանը:

ԿՈՒՂԱԿՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ  
ԲԱՏՐԱԿՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1925 թ. ապրիլին հրատարակվեց գյուղական տըն-  
տեսություններում աշխատող բատրակների աշխա-  
տանքին վերաբերվող որենքը. այդ տնտեսության մեջ  
բատրակի աշխատանքը կրում է ոժանդակիչ բնույթ:  
Դրանք այնպիսի տնտեսություններ են, վորտեղ հիմ-  
նական աշխատանքը կատարում է ընտանիքը և վոր-  
տեղ ընտանիքը միայն աշխատող ձեռքերի պակա-  
սության պատճառով և իր (ընտանիքի) անդամներին  
ողնելու նպատակով և ստիպված լինում բատրակ վար-  
ձել: Այդ որենքը կոչվում է ժամանակավոր կա-  
նոններ՝ գյուղացիական տնտեսություններում ոժան-  
դակիչ վարձու աշխատանքի գործադրման պայման-  
ների մասին: Այդ որենքը տարածվում է գյուղացի-  
ական միայն միջակ և թույլ տնտեսությունների վրա:  
Կուղակային և արդյունաբերական տիպի տնտեսու-  
թյունների վրա այդ որենքը չի տարածվում:

«Ժամանակավոր կանոններում» ցուցմուք կա, ուր  
ասված ե, վոր արդյունաբերական տիպի տնտեսու-

թյունների նկատմամբ գործադրվում ե խորհրդային  
տնտեսություններում տարվող աշխատանքի պայման-  
ների մասին վորոշումը:

Խորհրդային տնտեսություններում կիրառվում է  
աշխատանքի կողեկար: Հետևապես կուլտակների տըն-  
տեսությունների վերաբերյալ պետք է գործադրվի  
աշխատանքի կողեկար:

Սակայն վորպեսզի պարզ լինի, թե վոր որենքը  
պիտի գործադրել այս կամ այն տնտեսության նը-  
կատմամբ, խորհրդային մարմինները հատուկ վճռ-  
ներով վորոշում են, թե վարձու ուժ ունեցող գյու-  
ղացիական տնտեսություններից վճռոնք միջակ և սա-  
կավառուժ են և վճռոնք — կուլակ: Շատ նահանգներում  
դեռ այդպիսի սահմանավորում չի արված: Միության  
մեջ աշխատողները ստիպված իրենք են վորոշում, թե  
վոր տիպի պետք է համարել այս կամ այն տնտեսու-  
թյունը — արդյոք նրա վերաբերյալ գործադրել «Ժա-  
մանակավոր կանոնները» թե աշխատանքի կողեկար:  
Հասկանալի յե, վոր այդպիսի պայմաններում հաճախ  
առաջ են գալիս խառնաշփոթություններ: Կուլակ  
տնտեսությունները աշխատել են ողագործել «Ժա-  
մանակավոր կանոնները» և այդ բանը մի շարք դեպ-  
քերում նրանց հաջողվել ե: Յերբեմն դա նրանց հա-  
ջողվել ե այն պատճառով, վոր ինքը բատրակը չի  
պահանջել պայմանագիր կնքել միության միջոցով և  
աշխատանքի մասին ինքն անձամբ և պայման կապել:  
Յերբ միութենական կազմակերպությունները յերևան

ելին հանում, վոր կուլակը վարձել է բատրակին՝ խախտելով աշխատանքի կողեկսը, այդպիսի դեպքերում միությունները պահանջում ելին պայմանագրի լուծումը:

Կուսակցության XV համագումարը, գյուղում տարբող աշխատանքի մասին իր բանաձևում տվել ե այս աեսակ ցուցմունք. — «Հետեւ, վորպեսզի աշխատանքի կողեկսը կուլակային տիպի տնտեսություններում աշխատող գյուղատնտեսական բանվորների և բանվորուների վերաբերյալ անշեղ գործադրվի և կողեքսը խախտողները յենթարկվեն ամենալիս պատասխանատվության»:

Համագումարի այդ փորոշումը մէծ նշանակություն կունենա կուլակների տնտեսություններում աշխատող բատրակների դրության բարելավման գործում:

Պրոֆմիությունը, կուսակցական և խորհրդային կազմակերպությունները պետք ե հետևեն, վորպեսզի կուլակների տնտեսություններում աշխատող բատրակները ստանան այն ամենը, ինչ ըստ որենքի նրանց հասնում ե:

Բայց այդ — առանց բատրակների ոգնության վեռին իրագործել չի կարելի: Բատրակները իրենք պետք ե ոգնեն իրենց միությանը, կուսակցական կազմակերպություններին և խորհրդային մարմիններին: Այդ ոգնությունը կարտահայտվի նրանում, վոր բատրակները իմաց տան միությանը բոլոր այն

գեղքերի մասին, վորոնք նրանց հայտնի յեն, թե այս կամ այն կուլակը աշխատում ե խուսափել աշխատանքի համապատասխան որենքը կատարելուց: Բոլոր այդպիսի գեղքերում կուլակին հարկավոր ե պատասխանատվության յենթարկել:

Ի՞նչ կարող ե ըստ որենքի ստանալ կուլակի մոտ աշխատող բատրակը: Վարձվելու զործում վարձողի խոսքին վատահել չի կարելի: Խոսքով այլ ե խոստանում, իսկ յերբ հասնում ե աշխատավարձը վճարելու ժամանակը — ուրիշ բան ե ստացվում: Հարկավոր ե փաստաթուղթ, պայմանագիր, վորի մեջ գրված լինեն վարձվելու բոլոր պայմանները: Դա գեռ բավական չե — այդ փաստաթուղթը պետք ե տոմարագրված լինի գյուղխորհրդի հատուկ գրքում: Այդպես ավելի հաստատ կլինի: Վարձողն արդեն ապագայում չի հրաժարվի, իսկ յեթե հրաժարվի յել, որենքը նրան կսփառ կմարել:

Այդպիսի փաստաթուղթը, վորում հիշատակված են վարձվելու բոլոր պայմանները, կոչվում ե պայմանագիր (աշխատանքային կամ կոլեկտիվ): Այդպիսի պայմանագիր կուլակ վարձողների հետ միությունն ե կնքում: Այդ պայմանագիրի մեջ հիշատակվում ե բատրակի աշխատավարձը, բանվորական որը, հագուստը, արձակուրդը և այլն:

Կուլակների տնտեսություններում աշխատող բատրակների համար հանատվում ե 8 ժամյա բանվորական որ: Ամառվա գյուղատնտեսական աշխատանք-

ների ընթացքում թույլատրվում ե, վարձողի և պրոֆ-  
միության համաձայնությամբ, աշխատանքի որը յեր-  
կարացնել միայն վորոշ ըրջանում, վորը նախատես-  
նվում ե պայմանագրի մեջ: Յերկարացված բանվորա-  
կան որվա աշխատավարձն ել բարձրանում ե: Յեր-  
կարացված բանվորական որվա տևողությունը, և թե  
վորքան ժամանակով ե թույլատրվում այդ տեսակի  
աշխատանք, — այս բոլորը վորոշվում ե վարձողի և  
գյուղատնտեսական ու անտառային բանվորների մի-  
ության համաձայնությամբ ու արձանագրվում ե պայ-  
մանագրում:

Ամառվա աշխատանքի յեռուն ժամանակը, յերբ  
միության համաձայնությամբ յերկարացված բանվո-  
րական որ ե սահմանվում նաև անչափահասների հա-  
մար, այդ բանվորական որը չի կարող ավելի յերկար  
լինել քան չափահասներինը: Որինակ, յեթե հասակա-  
վոր բատրակի համար բանվորական որը ավելացված  
ե, միության համաձայնությամբ, 2 ժամով, այդ  
զեպում անչափահասների որվա յերկարացումը նույն-  
պես 2 ժամից ավելի չպետք լինի:

Վարձողը բատրակին պարտավոր ե տալ սպեց-հա-  
զուստ: 6 ամսից ավելի աշխատավոր բատրակները իրա-  
վունք ունեն 2 շաբաթվա արձակուրդի և կամ դրա  
փոխարեն ստանալու յեն  $\frac{1}{2}$  ամսվա աշխատավարձ:

Կուլակների տնտեսություններում աշխատավոր բատ-  
րակները պետք ե ապահովագրված լինենք Վարձողը  
չի կարող որենքով և վարձելու պայմանագրում հի-

շատակված աշխատանքի պայմանները վատացնել:  
Կուլակային տնտեսություններում գործադրվող աշ-  
խատանքի պայմաններին ավելի մանրամասն ծանոթ  
լինելու համար ամեն մեկ բատրակ պետք ե ուսում-  
նասիրի աշխատանքի կողեքուր:

ՄԱԿԱՎԱՐԻՒԺ ՅԵՎ ՄԻԶԱԿ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱ-  
ՑՈՂ ԲԱՏՐԱԿՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մենք արդեն ասացինք, վոր վոչ միայն միջակ,  
այլև սակավառուժ տնտեսությունները, աշխատող ձեռ-  
քերի պակասության պատճառով, բանվորներ են վար-  
ձում (կարմիր բանակայինների, այրի կանանց, վոր-  
բերի և այլն տնտեսությունները):

Բատրակների աշխատանքը նման տնտեսությունն-  
ներում ոժանդակիչ բնույթ ե կրում: Սակավառուժ-  
ների և միջակների տնտեսությունը զլիավորապես  
տարվում ե ընտանիքի անդամների աշխատանքով:

Այդ տնտեսություններում աշխատող բատրակների  
աշխատանքի պայմանները վորոշվում են «Ժամանա-  
կավոր կանոններ»-ով:

Այդ պայմանները վորոշում են վարձողի և վարձ-  
վողի կամ միության փոխադարձ համաձայնությամբ:

Վարձողը բատրակ և կամ բատրակունի վարձելիս  
պարտավոր ե նրանց կամ պրոֆմիության հետ (պրոֆ-  
միությունը բատրակի կամ բատրակունու անունից ե  
պայմանագիր կնքում) վարձու պայմանների մասին

գրավոր համաձայնություն կնքել (աշխատանքային պայմանագիր):

Ըստ որենքի, գրավոր պայմանագիրը պարտադիր է՝ յեթե բատրակը և կամ բատրակունին վարձվում յեն յերկու շաբաթից ավելի ժամանակով։ Գրավոր համաձայնությունները անպայման արձանագրվում են գյուղական համապատասխան մատյանում։ Աշխատանքային պայմանագրում հիշատակվում են բատրակի վարձվելու սկզբը և վերջը (բայց մի տարուց վոչ ավելի) և այն աշխատանքները, վորոնց համար բատրակը վարձվում եւ Բատրակի և բատրակունու աշխատանքի որվա տևողությունը վորոշվում եւ կողմերի համաձայնությամբ, տարվա առանձին ժամանակների համար առանձին, նայելով սեղոնին։ Շաբաթական մի որ բատրակին տրվում եւ հանդստանալու, բատրակը նույնպես տոնում եւ հեղափոխական և ուրիշ տոնները, վորոնք տվյալ վայրում տոնում են։ Կողմերի համաձայնությամբ կարելի յե թույլ տալ աշխատելու տոնն և ուրիշ հանդստի որերին, առաջն այդ կարելի յե միայն այն ժամանակ, յերբ ինքը վարձողը անձամբ մասնակցում եւ այդ աշխատանքին և յերբ իսկապես կարիք կա շտապ կերպով մի վորեւ աշխատանք կատարելու։ Այդ գեղագում վարձողը բատրակի հետ համաձայնության գալով պարտական եւ տոն որը փոխարինել մի ուրիշ որով և այդ որը բատրակին ազատել աշխատանքից, կամ վճարել աշխատած տոն որվա համար լրացուցիչ վարձատրություն, վորը վորոշվում եւ

կողմերի համաձայնությամբ (աշխատանքային պայմանագրով):

Որենքով արգելվում եւ 12-14 տարեկան անշափահաներին ծանր և վտանգավոր աշխատանքի դնել (որինակ՝ ծանրություններ աեղափոխել, մեքենաների վրա աշխատել և այլն), յեթե այդ աշխատանքը վնասելու և կամ հաշմելու (սախաթ դարձնելու) վտանգ եւ սպառնում։ Արգելվում եւ ոգտագործել հղի կանանց աշխատանքը՝ նրանց առողջության համար ծանր և վնասակար պայմաններում։

Յեթե ըստ պայմանագրի վարձողը պարտավորվում եւ յուր հաշվին կերակրել բատրակին կամ բատրակունուն, այդ գեղագում բատրակի կերակուրը վարձողի կերակրից վաս չպետք եւ լինի, իսկ ուտելիքի քանակը — միանգամայն բավարար։

Աշխատավարձի վճարման ժամկետը նույնպես հիշատակվում եւ պայմանագրում։ Աշխատավարձը չի կարող ցածր լինել պետական մինիմումից (պետական մինիմումը — ամենաքիչ աշխատավարձը, վորեց պակաս վոչ վոք իրավունք չունի վճարել), վորը աշխատանքի ժողովրդական կոմիսարիատի կողմից եւ սահմանվում՝ Սոցիալիստական խորհրդային հանրապետությունների բոլոր վայրերի համար։ Ըստ աշխատավարձի չափի, ԽՍՀՄ բոլոր վայրերը բաժանված են մի քանի գոտիների (կարգերի):

Բատրակի կամ բատրակունու ծանր հիվանդության, դժբախտության և կամ բատրակունու ծննդա-

բերության դեպքում վարձողը պարտավոր ե հիվանդին տանել բժշկի մոտ և կամ բժիշկ կամ ֆելզեր կանչել: Բժշկական ոգնությունը բատրակներին հասցվում ե պետության հաշվին, ձրիաբար:

Յեթե վարձողը բատրակին չի ապահովագրել (իսկ աշխատավորական տնտեսություններում բատրակների ապահովագրումը կամավոր ե) և յեթե դժբախտ դեպքը տեղի յե ունեցել վարձողի մոտ աշխատելիս և կամ կապված ե այդ աշխատանքի հետ, այդ դեպքում վարձողը, ժողովրդական դատարանի վորոշմամբ, բատրակին կամ բատրակունուն հատուցանում ե նրանց հասած վասը:

Գյուղացիական այն տնտեսությունները, վորոնք ոգտվում են վարձու աշխատանքից ամբողջ գյուղատնտեսական տարվա ընթացքում (գյուղատնտեսական տարի կոչվում ե գյուղատնտեսական դաշտային աշխատանքների լրիվ սեզոնը տվյալ շրջանում, այսինքն դաշտային աշխատանքների սկզբեց մինչև վերջը), պարտավոր են, բատրակի կամ բատրակունուն հիվանդության դեպքում և կամ վերջինի ծննդաբերության դեպքում, յեթե բատրակը կամ բատրակունին տվյալ տնտեսությունում աշխատել են 1 ամսից վոչ պակաս, վճարել նրանց աշխատանքային պայմանագրում հիշատակված աշխատավարձը: Բացի դրանից, վարձողը պարտավոր ե տրամադրել բնակարան և ուտելիք մի ամսվա ընթացքում, սկսած այն որից, յերբ հիվանդության պատճառով աշխատանքը դադարեցված ե:

Յեթե գյուղացիական տնտեսությունը վարձու աշխատանքից ոգտվում ե գյուղատնտեսական աշխատանքների միայն վորոշ ժամանակներում, այդ դեպքում վարձողը, բատրակի հիվանդության դեպքում, պարտավոր ե վճարել պայմանագրում հիշատակված աշխատավարձը և, բացի դրանից, տրամադրել բնակարան և ուտելեղեն յերկու շաբաթվա ընթացքում — յեթե բատրակը կամ բատրակունին տվյալ տնտեսությունում աշխատել են յերկու շաբաթից վոչ պակաս:

Վարձողը կարող ե բատրակին կամ բատրակունուն հարգելի պատճառներով աշխատանքից հեռացնել պայմանագրված ժամկետից առաջ: Սակայն դրա համար վարձողը պարտավոր ե բատրակին նախապես 2 շաբաթ առաջ զգուշացնել: Յեթե վարձողը բատրակին կամ բատրակունուն առանց զգուշացնելու յե աշխատանքից հեռացնում, այդ դեպքում նա պարտավոր ե նրանց վճարել 2 շաբաթվա աշխատավարձը: Բատրակի կամ բատրակունուն և վարձողի մեջ տեղի ունեցող բոլոր վեճերը լուծում են գյուղիտրարդներին և գավառակային գործադիր կոմիտեներին կից հաշտարար ատյանները: Այդ ատյաններում վեճերը լուծվում են բացառապես բատրակի և վարձողի համաձայնությամբ: Համաձայնություն չկայանալու դեպքում վեճը կարելի յե լուծել ժողովրդական դատարանի միջոցով:

Ահա այն գլխավոր կետերը, վոր վերաբերում են բատրակների՝ սակավառուժ և միջակ տնտեսությունների մեջ վարձվելու որենքին: Ամեն մեկ բատրակ

և բատրակուհի պարտավոր են զիտենալ «Ժամանակավոր կանոնները»։ Վարձողի հետ պայմանագիր կնքելուց առաջ հարկավոր ե դիմել միությանը և խորհրդակցել թե ինչ պահանջներ պետք ե առաջադրել վարձողին։ Ամենալավ ե՝ բանակցությունները հանձնել միությանը վարելու։ Միությունը կաշխատի ավելի լավ պայմաններ ստեղծել բատրակի համար։

XV համագումարը ուշադրություն դարձրեց նաև սակավառժ և միջակ տնտեսություններում աշխատող բատրակների վրա։ Այս բատրակները նույնպես պաշտպանության կարիք են զգում, ինչպես և կուլակների տնտեսություններում աշխատող բատրակները։

XV համագումարը արագ հետեւյալ ցուցմունքը. Հետեւ վոր ոժանդակիչ վարձու աշխատանքի վերբերյալ ժամանակավոր կանոնները կյանքի մեջ անցեղ գործադրվեն, ժամանակավոր կանոնները խախտողներին խստագույն պատասխանատվության յենթարկելով։

Գյուղատնտեսական բանվորների միությունը և աշխատանքի տեսուչները հակում են, թե ինչպես են իրազործվում աշխատանքային պայմանագրերը։ Առանձնապես դա անհրաժեշտ է կուլակների տնտեսությունների վերաբերյալ։ Որենքը խախտելու համար վարձողը պատասխանատվության ե յենթարկվում։

Միայն իրենց բատրակների ինքնագործնեության միջոցով, միության հետ սերտ կապի միջոցով— XV համագումարի ցուցմունքը՝ որենքի խիստ իրագործման մասին՝ հնարավոր կլինի լիովին կատարել։

ԲԱՏՐԱԿՆԵՐԻ ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այս հարցի վրա հարկավոր ե առանձնապես կանգառնել, վորովհետեւ այս հարցը բատրակների համար խիստ կարեոր նշանակություն ունի։

Վերջերս ԽՍՀՄ կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողկոմխորհի կողմից հրատարակվեց բատրակների և հովիմների սոցիալական ապահովագրության վերաբերյալ վորոշում։ Այդ որենքի եյությունը կայանում է հետեւյալում։ — բոլոր կուլակային տնտեսությունները, վորոնք բատրակներ են վարձում, նմանապես բոլոր գյուղական համայնքները և կամ գյուղացիական խմբակային տնտեսությունները, վորոնք հովիմներ են վարձում, պարտավոր են իրենց մոտ աշխատող բատրակներին, բատրակուհիներին և հովիմներին ապահովագրել։ Կուլակային տնտեսությունները և գյուղական համայնքները իրենց մոտ աշխատող բատրակների և հովիմների համար պարտավոր են անպայման սոցիալական ապահովագրման մուծումներ անել։ Այդ վարձողները չեն կարող հրաժարվել այդ մուծումները անելուց։

Վարձողները ապահովագրական մուծումները վճարում են իրենց և վոչ թե բատրակի կամ հովվի աշխատավարձի հաշվին: Վարձողները իրավունք չունեն բատրակի կամ հովվի աշխատավարձից հատկացումներ անել: Մակավառուժ և միջակ տնտեսությունները, վորոնց վրա (յեթե զրանք բատրակ են վարձում), տարածվում են «Փամանակավոր կանոնները», բատրակներին՝ ապահովագրում են վոչ թե պարտավիր կերպով, այլ կամավոր: Այդ նշանակում ե վոր նրանք իրենց մոտ աշխատող բատրակին կամ բատրակունուն կարող են ապահովագրել, կարող են և չապահովագրել: Որենքը նրանց այդ չի պարտագրում:

Յեթե նրանք համաձայնել են ապահովագրել, այդ գեղքում պարտական են սոցիալական ապահովագրության դրամարկղը մուծումներ կատարել իրենց մոտ աշխատող բատրակի համար: Այդ մուծումները շատ փոքր են՝ իրենց մոտ աշխատող բատրակի աշխատավարձի ամեն մեկ ռուբլուց 3 կոպեկ: Յեթե նրանք բատրակին կամ բատրակունուն պապահովագրել են, այդ ժամանակ բատրակի հիվանդության կամ մահվան դեպքում վարձողը վոչ մի պարտավորություն չի կրում բատրակին ոգնելու՝ նրա հիվանդության ժամանակ և կամ նրա ընտանիքին ոգնելու՝ մահվան դեպքում: Այդ բոլորը կատարում ե սոցիալական ապահովագրության դրամարկղը: Իսկ յեթե սակավառուժ կամ միջակ տնտեսությունը չի ապահովագրել իր բատրակին, այն ժամանակ բատրակի

հիվանդանալու, հաշմելու կամ բատրակունը ծննդաբերության գեպքում պարտավիր ոգնությունը պիտի ցույց տա վարձող տնտեսությունը:

Ներկայում մշակվում են առանձին կանոններ՝ բատրակների և բատրակուների ապահովման որենքը կյանքի մեջ իրականացնելու կարգի մասին: Այդ կանոններում պետք ե ցույց տրվի ապահովագրված բատրակների և բատրակուների ապահովման չափը:

XV Համագումարը իր վորոշումներում ցուցմունք տվեց «ապահովել գյուղատնտեսական և անտառային բանվորների և բանվորուների սոցիալական ապահովագրության որենքների խստիվ իրագործումը կյանքի մեջ»:

ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ — ԲԱՏՐԱԿՆԵՐԻ ԿՈԽՏՈՒՐԱԿԱՆ  
ՄԱԿՍՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՆ Ե

Բատրակների կուլտուրական զարգացումը և քաղաքական դաստիարակությունը մեծ նշանակություն ունի: Առանց զրանք չի կարելի մտածել բատրակներին գյուղի հասարակական կյանքին մասնակից դարձնելու: Առանց այդ աշխատանքին նույնպես անկարելի յե բատրակներին հաջող կերպով միության շուրջը կազմակերպելը: Հին կալվածավայրական Ռուսաստանում բատրակները գյուղացիության ամենաճնշված և ամենազրկված մասն են կազմել: Բատրակները համարյա բոլորը անզրագետ ենին: Այդ հին ժամանգությունը հիմա յել ստիպված ենք հաշվի առնել:

Առանձին շրջաններում բատրակների անդրագիտությունը հիմա յել հասնում է 70 տոկոսի, իսկ արևելյան հանրապետություններում և ծայրագավառներում — ուղբեկ, թուրքմեն, կիրգիզ, հայ և ուրիշ ազգությունների բատրակների անդրագետության տոկոսը ավելի բարձր է:

Միութան կողմից բավական մեծ աշխատանք է տարված բատրակների կուլտուրական մակարդակը բարձրացնելու և նրանց քաղաքական դաստիարակություն տալու գործում:

Միության այդ աշխատանքի չափի մասին կարելի յե դատել հետեւյալ տվյալներից.

Մինչև 1927 թ. հունվարի մեկը միության մեջ կային բատրակի անկյուններ — 3783, բանվորական ակումբներ — 344, ուսդիունդունիչներ ակումբներում և կարմիր անկյուններում — 880, մողական լավտերներ — 190, կարմիր անկյուններ — 5844, զբաղարաններ — 7767, բարձրախոսներ — 373, շարժական կինոներ — 175: Այժմ զբանց թիվը շատ ավելի յե:

Բատրակների և հոգիվների մեջ կուլտուր-կրթական աշխատանքը գլխավորապես տարվում է բատրակի անկյունների միջոցով: Խորհուրդային տնտեսությունների սեղոնային բանվորների, նույնպես և այդ տնտեսությունների մոտ ապրող բատրակների մեծ մասը մասնակից են արված կարմիր անկյունների և խորհրդային տնտեսությունների ակումբներին:

Հեղափոխության տասը տարվա ընթացքում տասնյակ հազարավոր գյուղատնտեսական և անտառային բանվորներ անցել են լիկայաններով: Սակայն բատրակների անդրագիտությունը գեռևս մեծ չափերի յե հասնում:

Կոմունիստական կուսակցության XV համագումարը «աշխատանքը գյուղում» իր բանաձևում առանձին ուշադրություն դարձրեց գյուղում կուլտուր-կրթական աշխատանքի ծավալման վրա: Համագումարը նշեց գյուղում ուղիոյի, կինոյի զարգացման, գրադարանների թվի շատացման վրա մեծ ուշադրություն դարձնելու կարևորությունը: Համագումարը անհրաժեշտ գտավ ձեռք առնել կարուկ միջոցներ՝ ընդհանուր պարտադիր սկզբնական ուսումը կյանքի մեջ իրագործելու համար, և այդ խնդրում ամեն միջոցներով աջակցել ազգաբնակչության և տեղական խորհուրդների ինքնագործներությանը: Բացի դրանից, համագումարը վորոշեց «Աշխատել հասնել այն վիճակին, վորապես զի դպրոցը (բոլոր աստիճանների) ավելի մեծ չափով ընդգրկի գյուղատնտեսական բանվորների, բատրակների, և չուներների զավակներին»:

Դրա համար ստեղծվում է հատուկ գպրոցական ֆոնդ (միջոցներ)՝ չուներների զավակներին ոգնելու համար: Դա նրա համար ե արվում, վորապես զի դպրոցներում սովորելու հնարա-

վորություն արվի չունեցրների զավակներին, մանավանդ վարձով աշխատող անչափահաս վորդեղիրներին։  
Համագումարը անհրաժեշտ գտավ։

«Գյուղացիական յերիտասարդության գպրոցների ցանցը ընդարձակել և միջոցներ ձեռք առնել՝ նրանցում բատրակ չքավորական յերիտասարդական կորիզը տմրացնելու, թոշակների (ուսանողներին դրամական ոժանեակություն) թիվը ավելացընելու, միջոցներ բաց թողնելու բատրակների և սակավառուժ գյուղացու զավակների համար հանրակացարաններ պահելու և այն։»

XV Համագումարի բոլոր ցուցմունքները բատրակների համար կունենան մեծ նշանակություն։

Սուսնձին նշանակություն ունեն միության կողմից և տնտեսական ու խորհրդային մարմինների աջակցությամբ կազմակերպված դասընթացքները, որինակ՝ հովիֆիլմների, բանջարաբույժների, արակտորիսանների և այն։ Այդ դպրոցը ավարտելով, բատրակը անուսում բանվորից դառնում ե վորակավոր (սովորած)։ Բատրակները գիտության և աշխատանքի ուսակություն (փորձ) ձեռք բերելով՝ բարելավում են իրենց դրությունը։ Սովորած բատրակ-արակտորիսարը և կամ հովիվը ավելի շուտ աշխատանքի կզտնի և իր աշխատանքի համար ավելի բարձր աշխատավարձ կստանա։

Ուսում և քաղաքական զարգացում ձեռք բերելու գործում, բատրակների համար մեծ նշանա-

կություն ունին բատրակային լրագրները։ Միությունը հրատարակում ե «Բատրակ» թերթը (ոռուերեն)։ Մյուս բոլոր հանրապետություններն են հրատարակում են բատրակային թերթեր՝ իրենց ազգային լեզվով։

Բատրակների այդ թերթերը — ամենալավ միջոցներն են՝ բատրակներին միության հետ կապելու։ Նրանք ոժանդակում են դաստիարակելու պիտանի աշխատողներ վոչ միայն միութենական աշխատանքների համար, այլ նաև խորհուրդների, կոռպերացիայի, փոխողկռմների աշխատանքների համար։ Ահա թե ինչու բատրակները պետք ե թերթստանան և իրենց շրջանում տարածեն, անդրագետներին կարդան այդ թերթը։

Գյուղատնտեսական պրոլետարիատի կուլտուրական և քաղաքական գիտակցության մակարդակը բարձրացնելը միայն գյուղատնտեսական և անտառային բանվորների միության գործը չէ։ Այդ գործում միությանը ոգնության պետք և հասնեն և՝ պետությունը և՝ ուրիշ պրոֆմիությունները։ Կուսակցությունը ոժանդակում ե, վոր գյուղատնտեսական և անտառային բանվորների մեջ տարվող քաղաքական աշխատանքները ապահովված լինեն։

Միությունը իր կողմից պետք ե ավելի շատ միջոցներ տրամադրի՝ բատրակների մեջ տարվող կուլտուր-կրթական աշխատանքներին զարկ տալու։

Մինչև այժմ այդ բանը շատ վատ եր արվում։

ХV Համագումարին ընկեր Մոլոտովը իր զեկուցան մեջ («աշխատանքը գյուղում») ասաց — «Մենք դիտենք, վոր գյուղատնտեսական բանվորների միության բյուջեյի կեսից ավելին ծախսվում ե միության ապարատի (կազմակերպությունների) պահպանման համար և միայն փոքր մասն ե ծախսվում բառակների կարեքների բավարարման համար։ Ահա բատրակների կազմակերպության դըրությունը. այս ասպարիզում մենք դեռ հեռու յենք այն ամենից, ինչ վոր պետք ե կատարել մոտակա ժամանակում»։

Այն, ինչ վոր ասաց ընկեր Մոլոտովը, միանգամայն ճշմարիտ ե։ Միջոցների կեսից ավելին ծախսվում ե միության հիմնարկությունների պահպանման համար։ Սակայն այդ ծախսերը արվում ելին նրա համար, վոր վոչ մի միություն՝ բացի գյուղատնտեսական և անտառային բանվորների միությունից՝ չունի և չի ունեցել այդշափ շատ միութենական հիմնարկություններ։ Բատրակները ցըված են առանձինառանձին և փոքրիկ խմբերով։ Բատրակներին կազմակերպելու համար պետք ե ունենալ բազմաթիվ միութենական բջիջներ՝ հենց գյուղերում։ Այլպիսի ստորին բջիջներ միության մեջ կան մոտ 30 հազար։

Բացի զրանից, միությունը ունի 3—4 հազար ռայոնական և գավառակային կոմիտեներ, 500 գավառային և շրջանային բաժանմունքներ և 50-ից

ավելի հանրապետական, յերկրային և նահանգային բաժիններ։ Այդքան մեծ թվով հիմնարկությունները պահանջում են նաև մեծ միջոցներ։ Յերբ կազմակերպությունները տեղերում կամրանան, այն ժամանակ հնարավոր կլինի զեկավար հիմնարկությունների քանակը կրամաւել։ Միությունը հիմա հենց այդ անում ե։ Ծախսերի կրճատումից սուացվելիք միջոցները պետք ե արամադրվին բատրակների մեջ տարփող կուլտ.-կրթական աշխատանքների համար։

Ինչքան շատ միջոցներ կհաջողվի տրամադրել բատրակների և ուրիշ գյուղատնտեսական և անտառային բանվորների կարիքների սպասարկման համար, այնքան ամուռ կլինի ինքը կազմակերպությունը, այնքան ավելի՝ հաջող կգնա բատրակների կազմակերպման և նրանց շահերի պաշտպանման գործը։ Միութենական միջոցները կանոնավոր կծախսվեն այն ժամանակ, յերբ այդ հարցով կհետաքրքրվեն բատրակների լայն գանգվածները։ Յերբ միության բոլոր անդամները կողնեն քննել միության ծախսերը, այդ ժամանակ ավելի հեշտ կլինի վերացնել ավելորդ ծախսերը և ավելի շատ միջոցներ արամադրել կուլտ.-կրթական և ուրիշ անհետաձգելի կարիքների համար։

ԲԱՏՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԹԻԿՈՒՆՔՆ Ե ԳՅՈՒՂՈՒՄ

ԲԱՏՐԱԿԸ ՊԵՏՓ Ե ՆՈՐ ԴՅՈՒՂԻ Ա.Ա.ԶԱՎՈՐ  
ԿԱՌՈՒՅՈՂԸ ԼԻՆԻ.

Վլագիմիր Իլիչ Լենինը գյուղատնտեսական բանվորների միության առաջին (Լենինգրադում կայացած) համազումարումնշել եր, վոր «միությունը կլինի խորհրդային իշխանության իսկական նեցուկը գյուղում, առաջավոր բանվոր բյուղական կյանքի փոփոխման գործում»:

Իսկ կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեյի փորոշման մեջ 1927 թ. մարտի 3-ին գյուղատնտեսական բանվորների մասին ասված ե, վոր նրանք «պրոլետարիատի ավանդաբարդն են գյուղում», այսինքն գյուղի առաջավոր ջոկատը (զորամասը): Այդ փորոշման մեջ ասված ե, վոր գյուղատնտեսական բանվորները կուսակցության կարեռագույն նեցուկն են գյուղում պրոլետարական զեկավարությունը անցկացնելու և բատրակների ու չուներների լայն զանգվածների՝ գյուղացիության միջակ տարրերի հետ միության ամրացման գործում, ընդում կուլակների:

Ինչպես ե գյուղատնտեսական պրոլետարիատը կտարում իր այդ գերը: Կազմակերպված բատրակ-

ները և գյուղատնտեսական ու անտառային բանվորների միությունը արդյոք հանդիսանում են «խորհրդային իշխանության նեցուկը գյուղում», «գյուղական կյանքի փոփոխման առաջավոր բանակը»:

Իհարկե, կազմակերպված բատրակները և նրանց կազմակերպությունը՝ միությունը՝ բոլշևիկների կուսակցության և խորհրդային իշխանության նեցուկն են գյուղում: Բատրակները պաշտպանում են խորհուրդները, աջակցում են խորհրդային իշխանության բոլոր քայլերին գյուղում: Սակայն միությունը գեր շատ անելիքներ ունի բատրակների կազմակերպման, դաստիարակման ու նրանց նյութական բարելավման գործում, վորպեսզի նրանք ավելի հաջող կերպով կատարեն իրենց առաջ դրված խնդիրները:

Ի՞նչ ե հարկավոր անել, վորպեսզի միությունը և նրա կազմակերպված բատրակները դառնան առաջավոր բանակը՝ սոցիալիզմի ճանապարհին:

Դրա համար հարկավոր ե, վոր միությունը վորքան կարելի յե շատ աշխատողներ դաստիարակի գյուղի հասարակական աշխատանքի համար: Վոչ միայն միության համար, այլև խորհուրդների, կոռպերացիայի, գյուղացիական փոխադարձ ու գնության կոմիտեների և գյուղի ուրիշ հասարակական կազմակերպությունների համար:

Յերբ այդ կկատարվի, այն ժամանակ միությունը և նրա կազմակերպված բատրակները իսկապես կդառ-

նան «գյուղական ընդհանուր կյանքի փոփոխման առաջավոր ջոկատը»:

Բատրակները պետք ե մեծ դեր կատարեն, վորպես բանվոր դասակարգի ներկայացուցիչները գյուղում։ Նրանք չունեուների հետ միասին կուսակցության ամենամոտ գյուղացիական շերտն են։ Կոմունիզմի այն դպրոցը, վորը անցնում ե բատրակը պրոֆմիության մեջ, նրան ոգնում ե գյուղում անցկացնել պրոլետարական գիծ։

Բատրակների հասարակական ինքնազորձնելությունը տարեց-տարի աճում է։ Այդ բանը ընդգծել ե նաև կուսակցության XV համագումարը։

Խորհրդների 1926 թ. վերնարությունները միայն Ռուսաստանի Սոցիալիստական ժեղերատիլ Խորհրդային Հանրապետության մեջ տվին գյուղվարդութիւն 16472 անդամ՝ գյուղատնտեսական և անտառային բանվորներից, 1927 թվին նրանց քանակը հասավ 23 հազարի։ Միության անդամներ կան շրջանային, գավառային, նահանգային և յերկրային գործադիր կոմիտեների կազմի մեջ։ Խորհուրդների վերջին Միութենական Համագումարի ժամանակ հանրապետության բարձրագույն մարմնի՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կենտրոնական Գործադիր կոմիտեյի կազմի մեջ ընտրվել են 18 գյուղատնտեսական և անտառային բանվորներ։

1927 թ. կոոպերացիայի և գյուղացիական փոխադրած ոգնության կոմիտեների անցած ընտրություն-

ները նույնպես ավելացրին բատրակների ներկայացուցիչների թիվը այդ կազմակերպությունների վարչությունների կազմի մեջ։

Գյուղատնտեսական և անտառային բանվորների, դրանց թվում նաև բատրակների, ակտիվությունը աճում է։ Նրանց ազգեցությունը գյուղի հասարակական կյանքի վրա ուժեղանում է։ Սակայն այդ ինքնազործներությունը և այդ ազգեցությունը դեռ շատ անբավարար են։ Այդ ասպարիզում դեռ շատ մեծ աշխատանք կա անելու։

Խորհրդի անդամ-բատրակները չպետք ե սահմանափակվեն միայն իրենց՝ բատրակների, շահերը պաշտպանելով։ Նրանք միևնույն ժամանակ պետք ե աշխատեն ի մի հավաքելու չունեուներին և վերջիններիս մոտիկ գյուղացիական շերտերին և նրանց շահերը պաշտպանելու։ Այդ ճանապարհով բատրակները կամրացնեն բանվոր դասակարգին չունեությունների միությունը միջակ գյուղացիության հետ։ Հարկավոր ե առանձին ուշագրություն դարձնել, վոր բատրակ կանայք ևս մասնակցեն հասարակական աշխատանքներին։

ԲԱՏՐԱԿՆԵՐԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԵՎ ԿՈՄՄՈՒՐՈՒՅ  
ՄԵԶ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

XV Համագումարի գեկուցումների և վորշումների մեջ առանձնապես ընդգծված ե, վոր բատրա-

կությունը լայն չափով չե առնված կուսակցության մեջ։ Կան նահանգներ, վորտեղ պրոֆմիության մեջ տասնյակ հազարներով կաղմակերպված բատրակներից կուսակցության մեջ ընդգրկված ե միայն մի քանի հարյուր մարդ։ XV Համագումարը գտավ, վորբարակներին կուսակցության մեջ ընդգրկելու այդ դրությունը անհանդուրժելի յէ։

Ահա ինչ ասաց կուսակցական համագումարը այդ հարցի առթիվ — «Պետք ե ուշադրությունը կենտրոնացնել՝ պատրաստելու և կուսակցության մեջ ընդգրկելու բատրակների ու չուներների գլխավորապես այն ակտիվը, վորը աճում ե գյուղատնտեսական բանվորների միության մեջ՝ չուներների խմբերում, նմանապես խորհուրդների, կոռպերացիայի, պատգամավորական ժողովների և այլն գործնական աշխատանքներում»։

Բատրակներին կուսակցության մեջ առնելը կշատրացնի բանվորների թիվը կուսակցության ընդհանուր բանակի մեջ զյուղում։ Իսկ դա շատ կարևոր ե զյուղի կուսակցական կաղմակերպությունների ամրապնդման համար։

Դա քիչ ե, պետք ե բատրակներից պատրաստել կուսակցական աշխատողներ, զյուղերի կուսակցական բժիջների ապագա ղեկավարներ։

Բատրակներին կոմսոմոլի մեջ առնելու գործը՝ մի քիչ լավ դրության մեջ ե։ Բայց այստեղ ել պետք

աշխատանքը ուժեղացնել։ Այդ հանգամանքի վրա քանից մատնանշված ե և կոմսոմոլի համագումարներին և կուսակցության վորոշումներում։

Միութենական և հասարակական ակտիվ աշխատանքներին մասնակցում են մոտ 150—200 հազար գյուղատնտեսական և անտառային բանվորներ։ Դա լավ պահեստ ե զյուղում կուսակցության շարքերը խացնելու համար։

Այդ ակտիվը արդեն մասսամբ պատրաստված ե։ Տասնյակ հազարավոր լավագույն բատրակներ, խորհրդային տնտեսությունների բանվորներ հենց մոտագա ժամանակում պետք ե մտնեն կուսակցության շարքերը։

#### ՈՊՊՈՅԻՑԻՄՆ ԶՐՊԱՐՏՈՒԽ Ե ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆԸ

XV Համագումարից առաջ տրոցիկստական ոպպոզիցիան հանդես յեկավ իր առաջարկություններով համագումարի որակարգի գլխավոր հարցերի առթիվ։ Այդ թեզերում կան առանձին կետեր նաև զյուղատնտեսական բանվորների մասին։

Ոպպոզիցիան մտաբերել ե բատրակին միայն վերջերս։ Բանն ինչումն ե։ Բանը նրանումն ե, վորտրոցիկստական ոպպոզիցիան կուսակցության գեմ մղած իր պայքարում հույս ուներ հենվել նաև բատրակների վրա։ Նա կարծում եր, վոր իրեն կհաջողվի

ոգտագործել բանվորության այդ ամենահետամնաց շերտերը՝ կուսակցության դեմ պայքար մղելու համար։ Ոպպողիցիան բոլորովին սխալ ե նկարագրում իրերի դրությունը։ Որինակ, նա առում ե, վոր «բատրակների միայն 20 տոկոսն ե ընդգրկված պրոֆմիության մեջ (այսինքն ամեն մեկ հարյուր բատրակից կազմակերպված են միայն քսանը)։ Բայց մենք արդեն գիտենք (դրա մասին առաջ ասված եր), վոր բատրակների շատ ավելի մեծ տոկոսն ե կազմակերպված։

Ոպպողիցիան խոսքերով բոլոր դժվարությունների վրայից ցատկում անցնում ե։ Ոպպողիցիան բոլորովին հաշվի չի առնում, վոր գյուղատնտեսական բանվորների միությունը մեզ մոտ՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ ամենայերիտասարդն ե, վոր նա կազմվել ե միայն 1919 թվին, իսկ բատրակների մեջ աշխատել սկսել ե միայն 1923 թվին։

Անհրաժեշտ ե կանգ առնել ոպպողիցիայի և այն հայտարարության վրա, թե կնքվող աշխատանքային պայմանագրերը «ամենուրեք կրում են շահագործող բնույթ»։ Դա — միության հասցեյին անմիջական մեղադրանք ե այն բանում, վոր բատրակները պաշտպանությունից բոլորովին զուրկ են։

Իսկապես այդպես ե արդյոք։ Ահա մի քանի տըլյալներ միության պայմանագրային աշխատանքի մասին։ 1926 թվին միությունը կնքել ե բատրակների

համար մոտ մեկ միլիոն 200 հազար աշխատանքային պայմանագրեր։ 1927 թվի միայն առաջի կեսին միության կողմից կնքված ե միլիոնից ավելի աշխատանքային պայմանագրեր։

Այս թվերը ցույց յեն տալիս, վոր միության աշխատանքը տարածվում ե վոչ միայն այն բատրակների վրա, վորոնք միության անդամներ են, այլ և միությունից դեռևս դուրս գտնված հարյուր հազարավոր բատրակների վրա։ Աշխատանքի ընդհանուր պայմանները և աշխատավարձի չափը, վորոնք սահմանվում են միության կողմից կնքվող աշխատանքային պայմանագրերով, ավելի բարձր են, քան որ ենքով նախատեսնվածները (ժամանակավոր կանոններով)։

Իհարկե, գյուղատնտեսական բանվորը, մանավանդ բատրակը, գեռևս այնքան ել հեշտ չի ապրում գյուղում։ Միության աշխատանքը բատրակների նյութական գրությունը բարելավելու գործում հանդիպում ե խոշոր դժվարությունների, վորովհետև մենք սոցիալիզմը կառուցում ենք յետամնաց յերկրում։ Միության բատրակների դրությունը բարելավելու պահանջները դեմ են առնում գյուղացիական տընտեսության յետամնացությանը։

Դեռևս ծանր դրության մեջ են գտնվում նաև խոշոր պետական (խորհրդային) տնտեսությունները։ Մինչև 1921 թիվը, խորհրդային այդ տնտե-

սությունները համարյա քանդված ելին։ Անտառային տնտեսությունը գտնվում եր անկման ամենածանր դրության մեջ։ Դյուզատնտեսական և անտառային բանվորների, ամբողջ բանվոր դասակարգի կողմից մեծ ճիգ եր հարկավոր՝ ծանր տարիների պատճառած վերքերը բուժելու համար։ Ներկայումս խորհրդային տնտեսությունները ամրանում են։ Անտառային տնտեսությունը նույնպես Բատրակի, գյուղատնտեսական և անտառային բանվորի նյութական դրությունը տարեցտարի բարելավվում է։

Սակայն ինչ եր գործնականապես առաջարկում ոպպողիցիան։

Նա առաջարկում եր կազմակերպել բատրակի պաշտպանությունը վոչ թե միայն կուլակների, այլ նաև «այսպես կոչված ուժեղ միջակների» դեմ։ Բայց արդյոք միայն կուլակի և ուժեղ միջակի մոտ պետք ե պաշտպանել բատրակին։ Միթե հարյուր հազարներով բատրակներ և հովվիներ չեն աշխատում սակավառուժ և միջակ գյուղացիական տնտեսություններում։ Միթե պետք չեայդ տնտեսություններում պաշտպանել բատրակի շահերը, Կոմունիստական կուսակցությունը, ինչպես մենք գիտենք, կուլակների և ուննորների տընտեսություններում աշխատող բատրակների շահերի պաշտպանման վրա առանձին ուշադրություն է դարձնում։ Սակայն միևնույն ժամանակ նա մատնանշում է՝ սակավառուժ և միջակ տնտեսություններում աշխատող բատրակի շահերի պաշտպանման անհրաժեշտությունը։

Ոպպողիցիան բատրակների գրությանը ծանոթ չե, նա կյանքից կտրվել է, կտրվել ե գործնական շինարարությունից։

Սուտ են նույնպես ոպպողիցիայի ուրիշ հայտարարությունները։

Ոպպողիցիան առաջարկում է գյուղական չունեությունների պայքարը կազմակերպել կուլակների դեմ։ Նա չի նկատել, վոր այդ պայքարը արդեն տարփում ե գյուղում սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում, և, կարող ենք ասել, վհչ անհաջող կերպով։

Ոպպողիցիան չի նկատել բատրակների կազմակերպության աճումը, նրանց աճող ինքնագործնեյությունը, չի նկատել այն բոլոր աշխատանքը, վոր կուսակցությունը կատարում ե բատրակների վերաբերյալ։

ԲԱՏՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ  
ԳՆՈՒՄ Ե ԼԵՆԻՆՑԱՆ ՃԱՄԲՈՎ։

Զնայած իրենց յետամնացությանը, բատրակները արդեն հասկացել են արօցկիստների տեսակետները։

Բատրակ ընկեր Զերնը շուրջ Ուկրայնայից, վողջունելով XIX համագումարը, ասաց։

«Մեր բատրակները կարդում են թերթեր, Ուկրայնայում բատրակը և բանվորը դիտեն ոպպողիցիայի պարագլուխների աշ-


խատանքի մասին, վորոնք կազմալուծում են  
մեր կոմունիստական կուսակցությունը,  
վորոնք կամակատարներ են փնտրում  
բանվոր դասակարգի և կոմունիստական  
կազմակերպությունների շարքերում, վորո-  
պեսզի քանդեն այն կենտրոնական կո-  
րիզը, վորը ճիշտ կերպով անցկացնում ե-  
լենինի նշանակած դիմումը: Բատրակները կտրակա-  
նորեն ասում են XV Համագումարին, վոր  
մեր կուսակցության շարքերից ոպպազի-  
ցիային պետք ե մաքրել այն ավելով, վորը  
քիչ առաջնավերեցին Դոնբասի բանվորները:  
Այդ ավելը պետք ե ավել առանց բացառու-  
թյան բոլոր ոպպազիցիոններին»:

Խերսոնի շրջանի բատրակունին, ընկեր Կավա-  
լենկոն, համագումարին հանձնելով՝ նվերը՝ բրիչը,  
ասաց, վոր այդ բրիչը «պետք ե կոմունիստական  
կուսակցության շարքերից արմատախիլ անի ոպպո-  
զիցիային, վորը խանդարում ե կոմունիստական կու-  
սակցությանը աշխատելու և վորը ուզում ե քանդել  
Լենինյան կոմունիստական պողպատյա կուսակցու-  
թյան միասնականությունը».

XV Համագումարը ոպպազիցիայի տեսակետները  
մենշենկական համարելով, վորոշեց նրան հեռացնել  
կուսակցության շարքերց: Բատրակները գոհու-  
նակությամբ կընդունեն Համագումարի այդ վո-  
րոշումը:

XV Համագումարի վորոշումները մանրամասն  
ցուցմունքներ են տալիս, թե գյուղում գյուղատն-  
տեսական բանվորների մեջ ինչպես պետք ե տանել  
աշխատանքը, այդ ուղղությամբ ինչպես և ինչ պետք  
ե անեն միությունը, կուսակցական, կոմյերիտական,  
խորհրդային և մյուս հասարակական կազմակերպու-  
թյունները:

Բատրակությունը հաստատ քայլերով գնում ե  
կոմունիստական կուսակցության յետելից, և կինի  
խակապես նրա ամուր նեցուելը՝ գյուղի վերաշնման  
գործում:



*ԱՅ*  
ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԸ.

## ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐԻՑ ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ ՀԵՏԵՎԼՅԱԼՆԵՐԸ

		1 թ. 25 կ.
Ազգային Հարց,—Ի. ՍՏԱԼԻՆ . . . . .	1 թ. 60 »	
Գյուղացիական Հարց,—Ի. ՍՏԱԼԻՆ . . . . .	50 »	
Լենին. — Պատգամներ ժողովրդ. լուսավորության մասին	20 »	
Լենին. — Պատգամներ յերիտասարդության . . . . .	15 »	
	1 թ. 50 »	
Ոպպոզիցիոն նոսաները Համ. Կոմ. Կուս. (Բ) ներում	20 »	
Բոլլեկիլների կուսակցությունը 1917 թվին,— ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎԿԻՑ	85 »	
	20 »	
1905 թ. մեր Ի-ին բանվորա-գյուղացիական հեղափոխու- թյունը,—Ի. ՖԼԵՌՈՎԸԿԻՑ . . . . .	70 »	
Քաղաքական բառարան,—կազմեց Վ. ԱԲՐՈՒՐՅԱՆ (656 էջ) 2 թ. —		
Պատմական մատերիալիզմի այլուրենք . . . . .	80 »	
Պայմանի յել շինարարության 10 տարի,—ՆՈՎԱԿՈՎԸԿԻՑ	70 »	
«Ի. ՍՏԱԼԻՆ» (համար. կենսագր.) . . . . .	7 »	
Ինչպես աշխուժացնել զյուլիստրուրթինը,—Զ. ՀԱՎՐԵՆՏԵՎ	30 »	
Պատերազմ չեն ուզում, բայց դիմադրելու պատրաստ են .	10 »	
	15 »	
Մերոդական ձեռնարկ (ուսուցիչների համար) . . . . .	70 »	
Նոր-դպրոցի ճանապարհին (ժողովածու, 480 էջ) . . . 2 թ. —		
Հասարակագիտությունը Ի-ին ասինանի դպրոցում,— Դեղօկունին յել յերեխաները, . . . . .	65 »	
Տգիտությունը յել սնանակատությունը,—Վ. ԴՄԻՏՐԻԵՎ	25 »	
Ի՞նչպես ե սարգած տիեզերք,—Դ. ԳՐԱՎԵ (նկարագ.)	15 »	
	50 »	

Արեվը, նրա վորդիները յեկ բռնները,—Բ. ՍԵՐԵՅԵՎԻՆ (նկ.)	40 կ.
Ինչպես ե առաջացել յեկ զարգացել կյանքը յերկրի վրա,	50 »
Մարդու յեկ կենդանիների ծագումը,—Դ. ԱԳՈԼ (նկ.)	35 »
Մարդու մեկնարարությունը,—Մ. ԳՐԵՄՅԱՅԿԻՑ (նկարագադ) . . .	50 »
Մարդու անհանունի քենամիներն ու բարեկամները,— Վ. ԱՐԵՆ, կայծակ, ելեքտրականուրյուն,—ԳՐԵՄՅԱՅԿԻՑ (նկ.)	20 »
Պատանի Պիոներ (ժողովածու, նկարագադ) . . . . .	40 »
Պիոներ, հետեւիր Լենինի պատգամներին . . . . .	60 »
Հոկտեմբերը (համառու պատմ.) . . . . .	20 »
Մեր ավագ յեղբայրները—Կոմիերիտականները . . . . .	10 »
ՄԱԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԾՈՐԴ ԳՐԱԴՐՈՒՅՆԵՐ, 25 անուն ԳԵՂԱՐՔ ԵՍՏԱԿԱՆ ՊԱՏՐՎԱԾՔՆԵՐ, 18 անուն ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ԳՐԱԴՐՈՒՅՆԵՐ, 8 անուն ԱՌՈՂԱՅԱԿԱԿԱՆ ԳՐԱԴՐՈՒՅՆԵՐ, 6 անուն ԴՊՐՈՅՍԱԿԱՆ ԶԱՆՈԶՅԱՆ ՊԻՏՈՒՅՔԻՆԵՐ (հայերեն տեսառվ):	33 »

### ՆՈՐ ԼՈՒՅՍ ՏԵՍԱՆ

Հեռագիր, հեռախոս, ռադիո (նկարագադ) . . . . .	25 կ.
Ասծու յեկ ատվածպատության մասին (նկ.) . . . . .	30 »
Թագիր ուներ,—Ն. ՈԼԵՅՆԿՈՎ . . . . .	20 »
Պայման ազ վտանգի յեկ հաւասվողականության դեմ . . .	23 »
Կոմիներների VI Կոմիների վորուսումները . . . . .	30 »
Կոմիներների տարք տարին . . . . .	18 »
Քաղցրազիտության դասագիրք կոմիերիս. համար պրակ I . . . . .	40 »
	» II . . . . .
	» III . . . . .

### ՀԱՆՉՎԱԾ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆ. — 1) «Հոդվածներ 1914—18 թ. թ. պատերազմի մա- սին», 2) «Ի՞նչ անել», 3) «Ո՞ր բայլ առաջ, յերկու բայլ յես» (բնդամենը 40 մամուլ):	
Պահանջեցեմ մեր լրիվ գրացուցակը, վար ողարկվում ե ձրի:	

Պ.Հ.Հ.Ն.Զ.Ե.Ք

ՄԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ, Վ.Օ.Պ.

ՈՒՂԱՐԿՎԱԿԱՐ Ե ԶՐԻ.

ԳԻՄԵԼ, Մոսկա, Նիկոլյսկայ, 10.

ЦЕНТРИЗДАТ.

«Ազգային գրադարան



NL0205183

15 4.

